ետ գանձս իւր ամենայն և գնեաց կերակուր յԵգիպտոսէ և ի Կիպրոսէ և յայլ տեղեաց, որովք կերակրէր զամենեսեան՝ որք առ նա դիմէին, և տիկինն Հեղինէ առատագութ սրտիւ բաշխէր ոչ ինչ խտրելով զհրէայս և զհեթանոսս ի հաւատացելոցն... որոյ յօգնութիւն եհաս մեծ զաւրավարն Խուրան, որում հաւատարմաբար ծառայէր մինչ ի մահն իւր։ Եւ յետ հինգերորդ ամի կացութեան իւրոյ յԵրուսաղէմ, մինչ լինէր առատութիւն կերակրոյ, և վերանայր սովն ի Հրէաստանէ և յԵրուսաղէմէ, ձեռն արկ և սկսաւ պարապիլ ի շինութիւն մատրանաց։ Նախ ձեռն արկ շինել մատրան իմն՝ մեծամեծ քարամբք՝ բրգաձև ի վերայ շիրմին Քրիստոսի, և այլ փոքր մատրան ինչ ի լեառն Ձիթենեաց ի վերայ սուրբ Ոտնատեղւոյն Քրիստոսի։ Ապա շրջապատեաց քարամբք սուրբ Այրն ծննդեանն Քրիստոսի որ ի Բեթղեհէմ քաղաքի, և սուրբ Մըսրոյն, յորում եղաւ մանուկն Յիսուս խանձարրապատ։ Եւ հուսկ ուրեմն ետ յօրինել կամար մի ի վերայ շիրմին Յակոբայ մեծի առաքելոյն որդւոյն Զեբեդեայ... որ ստէպ այց ելանէր առ սուրբ կոյսն Մայրն Յիսուսի մերձ ի վերնատունն Սիովնի...։ Եւ յետ թներորդում ամի կացութեան, վախճանի անդ եւ թաղի առաջի դրանն Երուսաղէմի, որ հիւսիսակողմն քաղաքին, զկնի երկրորդ ամի Վերափոխման սուրբ կուսի մաւրն Յիսուսի, ի սեպտ. ինն» (Արծ. էջ 5–7)։

«Եւ յետոյ կանգնեցին ի վերայ գերեզմանի նորա շիրիմ նշանաւոր և փառաւոր յոյժ, որպէս գրեն Եւսեբի եւ մերս Խորենացի (հատ. Բ. 32)։ Ականատեսի ճանապարհորդելն իւրում յԱղեքսանդրիա աշակերտակցովք իւրովք ի ճեմարան գիտութեան, որ եւ մնացին աւուրս ինչ յԵրուսաղէմ, մեռաւ անդ